

«Քվանտ» վարժարանի հեռավար ուսուցման հարթակում դասեր
նշանակելու

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հարգելի՛ ուսուցիչ

Մինչև որևէ դասարանում դաս նշանակելը անհրաժեշտ է eschool.am -ում սեղմել «Հեռավար դպրոց» հղման վրա և ցուցակից ընտրել դասարանը: Եթե համակարգ մուտք եք գործում առաջին անգամ անհրաժեշտ է դասարանների ցուցակի վերևում նշված «Ուղեցույց»-ի վրա սեղմել և կատարել քայլերը

Դասացուցակի ժամանակացույցի կիրառումը հարթակից օգտվելիս պարտադիր է:

Դասարանների բաշխումը սերվերների միջև կատարվել է՝ հաշվի առնելով սերվերների ծանրաբեռնվածությունը տվյալ ժամանակահատվածի համար: Եթե Ձեր հայեցողությամբ կատարեք փոփոխություններ, հնարավոր է Ձեր գործողությունները հանգեցնեն տվյալ սերվերի առավելագույն թույլատրելի օգտվողների քանակի գերազանցմանը, հետևաբար տվյալ սերվերից օգտվող դասարանների դասերի խափանմանը:

Դասարանն ընտրելուց հետո հարթակից օգտվելու Ձեր մուտքանունով և գաղտնաբառով մուտք եք գործում համակարգ: Անմիջապես բացվում է օրացույցը: Ձեր օրացույցում(համակարգի յուրաքանչյուր օգտվողի) արտացոլվում են այնտեղ տարբեր օրերի և ժամերի նշանակված միայն իրադարձությունները, որոնց հետ դուք կապ ունեք: Թե ինչպես մասնակցել որևէ իրադարձության (հանդիպում, խորհրդակցություն, ժողով), որը դուք չեք ստեղծել, նկարագրված է առաջին ուղեցույցում: Սույն ուղեցույցում մանրակրկիտ ներկայացվում է դաս կամ հանդիպում նշանակելու գործընթացը:


Դաս կամ հանդիպում նշանակելու համար անհրաժեշտ է օրացույցի համապատասխան օրվա ազատ տարածքում մկնիկի սեղմում կատարել: Բացվելու է նոր իրադարձության կարգավորումների պատուհանը (տե՛ս առաջին նկարը՝ հաջորդ էջում).

Title դաշտում անհրաժեշտ է լրացնել առարկան և դասարանը: Հիշե՛ք՝ դասարանը Title դաշտում լրացնելը դեռ չի ակնկալում, որ համապատասխան դասարանի աշակերտները կտեսնեն նշված դասն իրենց օրացույցներում:

Start և End դաշտերում նշված է դասի (իրադարձության) սկզբի ամսաթիվն ու ժամը և ավարտի ամսաթիվն ու ժամը: Նշված ժամանակահատվածից դուրս աշակերտները կամ հրավիրյալները չեն կարողանա մուտք գործել վիրտուալ դասասենյակ: Ժամերը փոփոխելու համար կարող եք սեղմել գրված ժամից աջ՝ ժամացույցի կոճակի վրա, և ցուցակից ընտրել ժամը: Ընտրելուց հետո առանց որևէ այլ փոփոխության դաշտում կարող եք փոխել ժամը՝ բոլորի ճշտությամբ: Որպեսզի աշակերտները կարողանան մինչև դասի սկսվելը մուտք գործել «դասասենյակ», խորհուրդ է տրվում սկզբի ժամը նշանակել մի փոքր ավելի վաղ: Ցուցակից ժամ ընտրելիս հաշվի՛ առեք, որ **AM-ով նշված են 00:00-ից 11:59-ը, PM-ով՝ 12:00-ից 23:59-ը:**

Դասարանի բոլոր աշակերտների օրացույցներում դասի նշումը կատարելու համար Անհրաժեշտ է ակտիվացնել Groups-ը և դիմացի դաշտում մկնիկով սեղմել ու ցուցակից

ընտրել դասարանը: Հեշտության համար կարող եք հավաքել դասարանի համարը՝ օրինակ 10, և ցուցակում կերևան միայն 10-րդ դասարանները (տե՛ս հետևյալ նկարը):



Դասարանը ընտրելուց հետո կունենաք հետևյալ տեսքը՝



Այնուհետև պետք է սեղմել Save կոճակը: Ձեր օրացույցի վրա կհայտնվի համապատասխան գրառումը: Կրկին սեղմելով գրառման վրա՝ կրկին կբացվի նույն պատուհանը: Այս դեպքում կարող եք կատարել ցանկացած փոփոխություն, և կրկին Save սեղմելուց հետո բոլոր «հրավիրյալ»-ների օրացույցներում կհաստատվի փոփոխված իրավիճակը:

Ձեր ստեղծած իրադարձությունը կարող եք հեռացնել՝ բացված պատուհանի ներքևում Delete սեղմելով:

Ամեն ինչ հաջող պատրաստելուց հետո օրացույցում իրադարձության վրա սեղմելու արդյունքում բացված իրադարձության մանրամասների պատուհանի ներքևում Enter room կոճակի վրա սեղմելով՝ մուտք կգործեք սենյակ: Առաջին ուղեցույցից օգտվելով՝ Ձեր աշակերտները հաջողությամբ մուտք կգործեն միևնույն դասասենյակը:

Հարցերի կամ խնդիրների դեպքում կարող եք Viber-ով զանգահարել +37491221135, միացնել հեռախոսի տեսախցիկը, ցուցադրել էկրանը, և մենք կօգնենք Ձեզ լուծելու համակարգի հետ կապված խնդիրները:

Այս ամենը խորհուրդ է տրվում նախքան իրական դասի անցկացումը փորձարկել, որպեսզի դասի սկիզբը և դասն առհասարակ ընթանան հնարավորինս հարթ, առանց տեխնիկական խնդիրների: